

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«__» _____ 2019 թվական

N__Ն

ք. Ստեփանակերտ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով նախատեսված կենտրոնական մարմին նշանակել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
	<p>2018 թվականի հոկտեմբերի 10-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի կոմիտեի ընդունվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-57-Ն օրենքը, որով նախատեսվել են որոշակի փոփոխություններ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Արցախի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Արցախի Հանրապետության քաղաքացիների կողմից Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրելու հետ կապված հարաբերություններում, մասնավորապես այս դեպքում անհրաժեշտ է Արցախի Հանրապետության կառավարության նշանակած կենտրոնական մարմնի եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին:</p> <p>Ուստի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 113-րդ հոդվածի գործնական կիրառությունն ապահովելու նպատակով ներկայացվել է սույն նախագիծը:</p>
2.	Առաջարկվող կարգավորման բնույթը
	Նախագծով առաջարկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով նախատեսված կենտրոնական մարմին նշանակել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը:
3.	Ակնկալվող արդյունքը
	Նախագծի ընդունման արդյունքում որդեգրման գործընթացը կիրականացվի օրենսդրությանը համապատասխան սահմանված ընթացակարգով:
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժին:
5.	Այլ տեղեկություններ
	Նախագիծն օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Կենտրոնական մարմին նշանակելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Կենտրոնական մարմին նշանակելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի պահանջում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ